## Զ. ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄ ՀԱՅՈՑ.

Կառավարիչ Թեմին և Ատենապետ Կոնսիստորիայի Գրիգոր Արքեպիսկոպոս Սագինեանց.

Անդամք.
- Կարապետ Ա. Քահանայ Հախիեանց.
- Սիմէօն Ա. Քահանայ Տէր Իսրայէլեանց.
- Համազասպ Քահանայ Տէր Աւետիքեանց.

Ատենադպիր Տիտուլեարնիյ Սովետնիկ Իսահակ Լազարեանց.

Ակզէկուտոր, որ և Գանձապահ Գուբերնսկիյ Սեկրետար Միրզա Տէր Սարգսեանց.

Իրծապահ Գուբերնսկիյ Սեկրետար Յակովբ Տէր Ստեփանեանց.

—

Ն—խ—ոյ յ—ջորդ—ւթ—ն.

Փոխանորդ վիճակին և Նախագահ Հոգ. Կառվր. Գարեգին Վարդապետ Սաթունեանց.

Անդամք.
- Սիմէօն Քահանայ Տէր Պօղոսեանց.
- Մինաս Քահանայ Տէր Պօղոսեանց.

Քարտուղար Կարապետ Փիրզատեանց.

—

## Է. ԿԱՐՈՒՑ ԵՒ ԲԱԹՈՒՄԻ ԹԵՄ ՀԱՅՈՑ

Առաջնորդ՝ Գրիգորիս Եպիսկոպոս Աղուանեանց.

—

## Ը. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԹԵՄ ՀԱՅՈՑ

Կառավարիչ՝ Մեսրոպ Վարդապետ Ձերմակեան.

—

## Թ. ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԵՒ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԹԵՄ ՀԱՅՈՑ

Առաջնորդ, և Վանահայր Ս. Ամենափրկչի Վանուց Նոր Ջուղայու՝ Գրիգորիս Արքեպիսկոպոս.

---

# ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Ամսոյս 26ին Ս. Սահակ Պարթև Հայրապետի տօնին և 30ին՝ Սրբոց Վարդանանց զօրավարաց տօնին Սուրբ պատարագից յետոյ Մայր Աթոռոյս Ճեմարանի աշակերտները ուսուցիչների հետ խմբուեցին Ճեմարանի Հանդիսարանը. ուր մէջ ընդ մէջ երգեցողութեամբ եղան բերանացի և գրաւոր ճառախօսութիւններ ըստ պատշաճին, օրինակելի կարգապահութեամբ և վայելուչ հանդիսաւորութեամբ.

—

Շնորհակալութեամբ ստացանք

Ա. «Донская Пчела» լրագրի խմբագրութեան հրատարակութիւն «Донско—Азовскій календарь на 1885 годъ գին 50 կոպ.

Բ. Օրացոյց 1885 թուականին Քրիստոսի. հրատարակութիւն Պ. Արգար Գուլամիրեանցի. գինն է 25 կոպ.

Գ. Ընդարձակ Օրացոյց 1885 սեպհականութիւն Սուրբ Փրկչի ազգային հիւանդանոցին Հայոց Կոստանդնուպօլսոյ. և

Դ. Հրատարակութիւն Մ. Հ. Ո. Գ. Ը. Երկրորդ մանկական գիրք. I Երկու երեխայ. II Աղքատ մարդիկ. III Ջրի կաթիլի պատմութիւնը. Մոսկուա. գինն է 20 կոպ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.